

Երբ յոթ տարեկան էի, հաճախ թերթում էի մայրիկիս՝ քիմիայի մասին գրքերը, ընտրում տարբեր նյութեր ու խնդրում բերել դրանք լաբորատորիայից, որ հատուկ լուծույթ պատրաստեի ծառերը չորացումից փրկելու համար: Հաջորդ յոթ տարիներին թեև առավել խորապես էի ուսումնասիրում հետաքրքրություններս ու հմտանում դրանցում, սակայն չէի հասկանում, թե ինչու են դրանք ոգևորում ինձ, ինչու եմ դրանք կարևորում ու դրանց ժամանակ տրամադրում:

«Այբ»-ում միանալով մի միջավայրի (որը հետագայում իրապես արժևորելով՝ պիտի կոչեի «համայնք») որն անընդհատ քննում էր կյանքի ընթացքն իր ինչուներով ու ինչպեսներով՝ սկսեցի հաճախ առերեսվել բարդ հարցադրումների:

Եթե այբականացմանս սկզբնական փուլում պատասխանելու լինեի այն հարցին, թե ինչ է որակյալ կրթությունը, մեծ ոգևորությամբ կպատմեի, թե որքան եմ կարևորում մրցունակ գիտելիք ձեռք բերելն ու քննադատական մտածողություն զարգացնելը, բայց բաց կթողնեի այն առանցքային տարրը, որի բացահայտման համար հաջորդ երեք տարիներին շատ պիտի պայքարեի:

Համագործակցությունը այբական ուսուցիչների հետ, որոնցից շատերը միաժամանակ ակտիվ հետազոտող ու գիտնական են, որոնք ստեղծում են նոր գիտելիք ու ծառայեցնում այդ գիտելիքը իրական խնդիրների լուծմանը, վերափոխեց մտածելակերպս. կրթությունը սկսեցի դիտարկել իբրև միջոց՝ պայքարելու իմ և համայնքիս կողմից իմաստավորված իրողությունների համար: Ուսումնառությունս դարձավ նպատակային՝ միաժամանակ բերելով նաև անձնական բավարարվածության զգացում: Այժմ գիտակցում եմ, որ միշտ կարիք եմ ունեցել երկու բանի՝ ծառայել մարդկանց ու անել դա քիմիայի միջոցով:

Ստանալ որակյալ կրթություն նշանակում է զարգանալ ու բարելավվել մի կրթական համայնքում, որն ունի հստակ առաքելություն, համախմբված է խստապահանջ արժեհամակարգի շուրջ և շարունակում է հաջողել միայն գաղափարական միասնականության շնորհիվ:

Կրթությունը շարունակական ցիկլ է. ամեն անգամ մոլորվելիս ես նորից կլինեմ 14 տարեկան, արժեքների համար պայքարելիս՝ 17 և վերափմաստավորվելիս՝ 7 տարեկան:

«Այբարար» դառնալու և «Այբ»-ի գաղափարը շարունակելու համար միացե՛ք ամսական նվիրատվությունների համակարգին: Ձեր աջակցությունը կուղղվի «Այբ» ավագ դպրոցի կրթաթոշակային ֆոնդին:

«Այբ» ավագ դպրոցի աշակերտների ավելի քան 75%-ն ամեն տարի սովորում է ուսման վարձի փոխհատուցման՝ կրթաթոշակի շնորհիվ: Կրթաթոշակային ֆոնդը հնարավորություն է տալիս ցանկացած երեխայի, որն ընդունվել է ավագ դպրոց, անկախ ընտանիքի ֆինանսական վիճակից, ստանալու համաշխարհային մակարդակի մրցունակ կրթություն:



Իլյա Լալազարյան  
«Այբ» ավագ դպրոցի շրջանավարտ



[donate.ayb.am](https://donate.ayb.am)